ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

Ա. Վ. ՍՈՒՎՈՐՈՎԻ ՀԱՅ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՆ ՈՒ ԶԻՆԱԿԻՑՆԵՐԸ

(Մեծ զորավարի ծննդյան 250-ամյակի առթիվ)

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Ռուս մեծ զորավար Ալեքսանդր Վասիլևիչ Սուվորովը (1730—1800) իր հարուստ կյանքի և փայլուն գործունեության ընթացքում զանազան առիթներով շփվել է հայ հասարակության և նրա քաղաքական ու եկեղեցական գործիչների հետ, զբաղվել նրանց հուզող հարցերով, այդ թվում և Հայաստանի ազատագրության ու հայկական պետության վերականգնման խնդրով։ Աշխարհահռչակ գեներալիսիմուսը ունեցավ հայ ծանոթներ, գործակիցներ և բարեկամներ, ինչպես նաև ռազմի դաշտերում կոփված քաջարի հայ աշակերտներ ու զինակիցներ։

Ա. Վ. Սուվորովը գործարար կապեր հաստատեց մի շարք հայ հասարակական-քաղաքական գործիչների հետ մասնավորապես 1770-ական թթ. վերջերին, երբ տեղի ունեցավ Ղրիմի հայերի և հույների գաղթը Հարավային Ռուսաստան։

1778 թ., Եկատերինա II-ի հրահանգով, գեներալ-պորուչիկ Ա. Վ. Սուվորովը կազմակերպեց Ղրիմի հայերի գաղթը Ազովյան նահանգ, որի հետևանքով Դոնի ափին հիմնվեց Նոր Նախիջևանի հայկական գաղութը։ Գաղթի բավական բարդ և դժվարին գործը հաջողությամբ ավարտելու համար նա անմիջական կապերի մեջ մտավ տեղի հայ ազդեցիկ գործիչների հետ։

Սուվորովը մշտական կապեր հաստատեց մասնավորապես վարդապետ Պյոտր Մարկոսի (Պետրոս Մարկոսյան) և քահանա Յակովի (Հակոբ) հետ։ Զորավարը ընդունում, խորհրդակցում և հանձնարարություններ էր տալիս նրանց։ Սուվորովի զեկուցագրերում նրանց անունները հաճախ են հիշվում։ Այսպես, օրինակ, իր 1778 թ. հուլիսի 17-ի զեկուցագրում, ուղղված Գ. Պոտյոմկինին, զորավարը հայտնում էր, որ հայերի անվանի հոգևորականներից են կաթոլիկական դավանանքի Պյոտր Մարկոսը և Յակովը, որոնք համարվում են հարգելի և լավագույն մարդիկ[1]*։ Սուվորովը 1778 թ. հուլիսի 29-ին գրում է Պոտյոմկինին, որ երեք օր առաջ նա ընդունել է հայկական պատգամավորությանը, այդ թվում վարդապետ Պյոտր Մարկոսին և վանական Յակովին, որոնց հետ քննարկվել են գաղթի հետ կապված հարցեր*[2]*։*

Սուվորովը, խոսելով գաղթի կազմակերպման աշխատանքները սկսվելու մասին, 1778 թ. օգոստոսի 6-ին Պ. Ի. Տուրչանինովին հայտնում էր. «Տեն-

---

1 *Տե՛ս* «Присоединение Крыма к России», т. II, СПб., 1885, стр. 560.

2 Архив ЛОИИ, ф. Собрание Воронцовых, д. 1309, л. 39.

դորեն աշխատում ենք. սուրբ հայրերը շատ աշխատանք են թափում... Վարդապետ Պյոտր Մարգոսը այնպես ոտքի հանեց հայերին, որ դանաղան տեղերից ու ամեն կողմից շարան-շարան ձգվեցին։ Վանական Յակովը բավական հաջողության հասավ կաֆացիների մեջ»[3]։

Ա. Վ. Սուվորովը գործարար կապերի մեջ է եղել նաև ղրիմահայեր Անանիայի և Անդրեասի հետ։ Ինչպես երևում է Սուվորովի թղթերից, նրանք զորավարի հանձնարարությամբ ակտիվ մասնակցություն են ունեցել հայերի գաղթը կազմակերպելու գործում։ 1778 թ. սեպտեմբերի 25-ին Պոտյոմկինին գրած նամակում Սուվորովը խնդրում էր հաշվի առնել այս երկու հայ հարյուրապետների վաստակը և նրանց շնորհել կապիտանի աստիճան։ Ալեքսանդր Վասիլևիչը գրում էր. «Համարձակվում եմ հայ ժողովրդի պաշտոնաթող կոմպանեյսկի հարյուրապետներ Անանիային և Անդրեասին, որոնք գերազանցապես աշխատեցին քրիստոնյաներին Ռուսաստան գաղթեցնելու գործում, ձերդ պայծառափայլության մեծահարգ հովանավորությանը հանձնարարել, և այդ օգնության համար խոնարհաբար խնդրում եմ ձերդ պայծառափայլությանը հավասարեցնել նրանց բանակային պաշտոնաթող կապիտանի աստիճանին»[4]։

Սուվորովի նամակներում և զեկուցագրերում խոսվում է նաև պոդպորուչիկ հայ Պյոտր (Պետրոս) Իվանովի մասին։ Վերջինս նույնպես կապված էր Սուվորովի հետ և նրա հանձնարարությամբ Ղրիմում եռանդուն գործունեություն է ծավալել։ Զորահրամանատարը, հաշվի առնելով Իվանովի վաստակը, հարց է բարձրացրել նրան դրամական նպաստ նշանակելու մասին[5]։

Պոտյոմկինի գրասենյակի թղթերից երևում է, որ 1778 թ. աշքի է ընկել նաև հայ Պավել Արտեմովը։ Քրիստոնյաներին Ղրիմից Ազովյան նահանգ վերաբնակեցման ժամանակ ցուցաբերած ծառայության և ջանքերի համար նա Սուվորովի միջնորդությամբ պրապորշչիկի աստիճան է ստացել[6]։

Հայերի գաղթի ժամանակ Ղրիմում էին գտնվում Երուսաղեմի երկու հայ հոգևորական։ Սուվորովը կապեր է հաստատում նաև դրանց հետ և օգտագործում նրանց հայերի գաղթը կազմակերպելու գործում։ 1778 թ. հուլիսի 25-ին նա Ղրիմից այդ մասին հայտնում էր Պոտյոմկինին։ «Ի դեպ,— գրում է Սուվորովը,— այստեղ պատահեցի Երուսաղեմի հայ հովվապետին և վարդապետին. այժմ նրանք օգտագործվում են օգտավետությամբ»[7]։

Ըստ երևույթին, հենց այս շրջանում է, որ Սուվորովը Երուսաղեմի հայկական Ս. Հակոբ՝ վանքին ուղարկում է մի թանկարժեք նվեր և այդ կապակցությամբ Երուսաղեմի հայ պատրիարք Հովակիմ Քանաքեռցին շնորհակալական նամակ է հղում զորավարին։ Նամակից երևում է, որ Սուվորովի նվերը եղել է թանկարժեք գեղարվեստական նկար՝ «Սուրբ հոգու հայտնության» տեսարանը, «նկարված հանճարեղ վարպետի արժանի ձեռքով»։

Նամակում, խորին երախտագիտության և ողջույնների հետ մեկտեղ ջերմ խոսքեր են ուղղված Սուվորովի հասցեին։ «Քաջագույն Զորաւարիդ Աղնուա-

---

3 «Письма и бумаги А. В. Суворова», т. I, Пг., 1916, стр. 124.

4 Архив ЛОИИ, ф. Собрание Воронцовых, д. 1309, л. 41. См. также «Архив князя Воронцова, кн. 24, стр. 294.

5 «Письма и бумаги А. В. Суворова», т. I, стр. 387.

6 ЦГВИА, ф. 52, оп. 194, д. 226, л. 139.

7 ЦГАДА, ф. Госархив, разряд XVI, д. 588, ч. 12, л. 369.

դոյն աղգիդ Ռուսաց»,— այս խոսքերով է դիմել հայ պատրիարքը Սուվորովին, խնդրելով, որ նա մշտապես օգնություն ցույց տա հայ ժողովրդին. «Եւ արդ՝ որովհետև միջնորդութեամբ Սրբազնասուրբ և գեղեցկանկար Պատկերի գալստեան Հոգւոյն Սրբոյ բարեկամացեալ և որպէս թէ համարձակութիւն դտեալ խնդրեմ ի մարդասիրութենէ քումմէ, զի հանապազ յիշատակս մեր ի մէջ աղգի և ընտանեաց քոց յիշեսցես ի բարին. և ի յաղգէ մերմէ ուր և պատահեսցի զմարդասիրութիւն ցուցցես»։

Պատրիարքի՝ Սուվորովին գրած նամակը վերջանում է հետևյալ տողերով. «Արդ՝ որովհետև բարեպաշտութիւն քոյ միշտ փափաքի բարեաց գործոց և հանապազ առնոս զմարդասիրութիւնս... ցեկեղեցւոյ ըստ պատմելոյ վերոգրեալ Դաբրիէլ վարդապետին և Արհիեպիսկոպոսին։ Ուրեմն կայ և մնայ քեզ արդա[րութեան պ]սակն։ Եւ դու ակնկալեալ յատիտենական փառաց, խնդրի զիջանիլն մեծութեանդ քոյ ի խնդիրս մեր և ձեռնտու[թեամբ] մերում. որք գտանին ի յօրհնեալ երկիրդ ձեր առնելով զբարերարութիւնս որքան և հնարէ, համարելով ոչ որպէս [օտար] այլ որպես բուն համազգիս բարեկամս և սիրելիս։ Եւ մեք աստ ի սուրբ տեղիսն Քրիստոսի աղօթող եմք վասն ձեր և բարւոք [Զոր]ավարութեան կենաց ձերոց»[8]։

Սուվորովի հետ կապեր ուներ Ղրիմի աղգեցիկ հայերից Մարկոս Սարգսի Սերեբրյակովը (Կյումուշլի, Արծաթագործյան), որը Սևծովյան նավատորմի հերոսներից մեկի՝ հռչակավոր ծովակալ Լազար Մարկովիչ Սերեբրյակովի (1795—1862) հայրն էր[9]։ Պաշտոնական մի քանի փաստաթղթերում, այդ թվում նաև ֆելդմարշալ Ռումյանցև-Զադունայսկու գրագրություններում Մ. Սերեբրյակովը հիշատակվում է որպես «անվանի ենիկոլյան հայ հարյուրապետ Մարգոս»[10]։

Մարկոս Սերեբրյակովը, ունենալով ռուսական կողմնորոշում և ցանկանալով թուրք-թաթարական խաների ծանր լծից ազատել Ղրիմը, ակտիվ գործունեություն ծավալեց հօգուտ Ռուսաստանի։ Կամավոր ծառայության մտնելով ռուսական բանակ, նա 1770-ական թթ. մասնակցեց Ղրիմում ծավալված պատերազմական գործողություններին և զգալի օգնություն ցույց տվեց Ա. Վ. Սուվորովին՝ Ղրիմի քրիստոնյաներին Ռուսաստան տեղափոխելու գործում։ Այս մասին գոյություն ունի Ալեքսանդր Վասիլևիչի գրավոր վկայությունը։ Կոզլով քաղաքում, 1779 թ. ապրիլի 23-ին Մ. Սերեբրյակովի անունով Սուվորովի գրած ատեստատում ասված է. «Տրված է սույնը պաշտոնաթող կոմպանեյսկի հարյուրապետ Մարկ Սերեբրյակովին առ այն, որ նա օգտագործվել է այստեղից քրիստոնյաներին Ազովյան նահանգ դուրս բերելու, ինչպես նաև սրանից առաջ զանազան բավական կարևոր գաղտնի հանձնարարությունների համար, որոնք կատարել է գերազանց ջանասիրությամբ և ճավատարմությամբ, որոնց համար արդարամտությամբ արժանի է ճատուկ ճարգանքի»[11]։

Պետք է նշել, որ Սուվորովը, ի տարբերություն ցարական բյուրոկրատ գեներալների, զգալի հոգատարություն ցուցաբերեց գաղթի դիմած հայ բնակ-

---

8 ГПБ ССР им. В. И. Ленина, отд. рукописей, Армянский фонд, № 7. Տե՛ս նաև ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1950, № 6, էջ 96—97։

9 Վ. Միքայելյան, Ծովակալ Լ. Մ. Սերեբրյակով, Երևան, 1979։

10 «Присоединение Крыма к России», т. II, стр. 404.

11 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1977, № 2, էջ 104 (ընդգծումները մերն են—Մ. Ն.)։

չության նկատմամբ։ Կարիքի և զրկանքների մեջ գտնվող գաղթականների վիճակը բարելավելու նպատակով նա քանիցս Ղրիմից դեկուցագրեր է ուղարկել Պետերբուրգ։ Այսպես, օրինակ, 1778 թ. օգոստոսի 23-ին Սուվորովը գրում էր իշխան Պոտյոմկինին. «Ռուսաստանում վերաբնակեցվող հայերի կողմից ընտրված 4 պատգամավորներին, որոնք ինձնից թույլտվություն են խնդրում Սանկտ-Պետերբուրգում լինել և հարմար ժամանակ ներկայանալու ձերդ պայծառափայլությանը անձնվիրական խնդրանքով՝ իրենց հարմար վայրերում նպաստավոր բնակեցման և այնտեղ ապրելու խնդրանքի կապակցությամբ,— խոնարհաբար խնդրում եմ պաշտպանել և ձերդ բարձր ողորմածությունը ցույց տալ նրանց»[12]։

* * *

Ա. Վ. Սուվորովի հայ ծանոթների ու բարեկամների թիվը զգալի չափով ավելացավ 1780—1782 թթ., այն տարիներին, երբ նրան, ինչպես հայտնի է, հանձնարարված էր նախապատրաստել ռուսական զորքերի մի նոր արշավանք դեպի արևելյան Անդրկովկաս։ Արդեն 1780 թ. հունվար ամսին զորավարը հանդիպումներ ունեցավ Պետերբուրգում հայ ազատագրական շարժման նշանավոր ներկայացուցիչներ Հովսեփ Արղությանի և Իվան (Հովհաննես) Լազարյանի հետ։ Հայ գործիչները նրան մանրամասն տեղեկություններ հաղորդեցին Հայաստանի և ամբողջ Անդրկովկասի տնտեսական, քաղաքական դրության, երկրամասի քաղաքների, բերդերի, ճանապարհների մասին։

Արղությանն իր օրագրում արձանագրել է. «Յունվարի 2 ներեալ Պօռոճիկ Ալեքսանդր Վասիլիչ Սուվօրօվն եկն առ ի տեսութիւն. և մեր աղնիւ Աղայ Յովհաննէսն ընդ նմա ի վերայ նոյն նիւթոյն. և ի վերայ երկրացն մերոց բազում հարցմունս արար մինչև ցերկու ժամս։ Եհարց և մանրամասնաբար զկացութենէ սրբոյն Աթոռոյն մերոյ էջմիածնայ և յուսադրութիւն արար յոյժ որպէս թէ նորոգելոց իցեն ի մեզ իշխանութիւն ինչ՝ որ և ի մէնջ ելեալ գնացեալ էր առ պայծառափայլ քնեազն Գրիգոր Ալեքսանդրիչ Պոտեմկինն և պատմեալ նմա զամենայն ասացեալսն մեր վասն քաղաքաց»։

Նոր տեսակցությունը տեղի է ունեցել հունվարի 13-ին։ Արղությանը գրում է. «Ի սոյն ամսոյ 13, նոյն ներեալ Պօռոճիկ Սուվորովն զմեզ Աղայ Յովհաննէսիւն կոչեալ էր առ ինքն վասն տեղեկութեան կացութեանց և վարուց, նաև որպիսութեանց մէլիքանցն մերոյ որք ի յԱրցախ աշխարհի են, որ այժմ կոչի Ղարաբաղ և կամ Սղնախ, և մեք ասացաք զկարգն նոցին և զմիաբանութիւնն ընդ իրեարս, և զտարաձայնութիւնն և զպատճառն տիրելոյն նոցա ի Փանախանէն... Պատմեաց Աղայ Յովհաննէսն և մեր ուղբաշոց միաբանութիւնն և զտէրութենէ նորոգելն և ոչընչիւ կորուսանելն։ Նաև՝ Դաւիթ բէգի զօրանալն և արիութիւնն, և յետոյ վախճանին խափանիլն։ Հարցրին և զբարուոյն արքային Հերակլայ և զկարողութենէ նորին. և զոր ինչ ասացաք գրեցին»[13]։

Հունվարի 10-ին Լազարյանը Սուվորովին ներկայացնում է մի զեկուցագիր, ուր խոսվում է Հայաստանի քաղաքական վիճակի մասին և արվում

---

12 ЦГАДА, ф. Госархив, разряд XVI, д. 588, ч. 12, л. 382 (ընդգծումը մերն է—Մ. Ն.)։
13 «Դիվան հայոց պատմության», գիրք Թ, Թիֆլիս, 1911, էջ 23—24։

առաջարկներ՝ երկիրը պարսկական ու թուրքական տիրապետությունից ազատագրելու և հայկական պետականությունը վերականգնելու համար[14]։ Ուշագրավ է այն փաստը, որ այդ նույն օրերին ռուսական արքունիք է ներկայացվում Հայաստանի պատմական քարտեզը, որի տակ գրված է Ա. Վ. Սուվորովի ստորագրությունը[15]։ Ըստ երևույթին, այդ քարտեզը զորավարին հանձնել են Արղությանը և Լազարյանը։ Ի դեպ, քարտեզի հետ կապված փաստը, Սուվորովի ունեցած զրույցները Արղությանի ու Լազարյանի հետ, ինչպես նաև մի շարք այլ հանգամանքներ վկայում են այն մասին, որ մեծ զորավարը Հայաստանի ազատագրության և հայկական պետության վերականգնման ջերմ կողմնակիցն է եղել։

Իրեն հանձնարարված խնդիրը լուծելու նպատակով Ա. Վ. Սուվորովը 1780 թ. փետրվարին ժամանեց Աստրախան, ուր մնաց երկու տարուց ավելի։ Այստեղ նա ձեռք բերեց նոր հայ ծանոթներ ու բարեկամներ։ Դրանց թվում պետք է հիշել Բոգդան Խաստատովին, Ալեքսանդր Մելիքովին, Նիկիտա Յակովլևին, Ղուկաս Պետրովին և ուրիշներին, որոնք կատարելով զորավարի կարևոր հանձնարարությունները, գարձան նրա հավատարիմ գործակիցներն ու բարեկամները[16]։ Իր մի շարք զեկուցագրերում Սուվորովը բարձր գնահատական է տալիս նրանց՝ իրեն մատուցած ծառայությունների համար։ Բնորոշ է, օրինակ, որ զորավարի թղթերում Բոգդան Խաստատովը հաճախ որակվում է որպես «Իմ բարեկամը» (мой приятель), իսկ Ալեքսանդր Մելիքովը՝ որպես աղնվաբարո մարդ («человек порядочного поведения»), որ արժանի է վստահության[17]։ Գնահատելով գանձակեցի հայ Նիկիտա Յակովլևի գործունեությունը հօգուտ Ռուսաստանի, Սուվորովը առանձին խնամք է հանդես բերել նրա նկատմամբ, պարգևատրել է նրան և միաժամանակ խնդրել Գ. Պոտյոմկինին՝ իր «բարձր հովանավորության» տակ վերցնել Յակովլևին[18]։

1780—1781 թթ. գտնվելով Աստրախանում, Սուվորովը քաղաքական կապեր է հաստատել Ղարաբաղի հայ մելիքների հետ։ Վերջիններիս և զորավարի միջև տեղի է ունեցել նամակագրություն։ Արխիվային նյութերում պահպանվում է, օրինակ, մելիք Ադամի և մելիք Բեգլարի 1781 թ. սեպտեմբերի 2-ի նամակը՝ ուղղված Սուվորովին, որ սկսվում է հետևյալ տողերով. «Ամենապայծառ աղնիւ և բարեխնամող ղենառալ պառուտչիկ գավալեր Ալեքսանդր Վասիլեվիչին։ Մեք ներքոյ անվանեալքըս Ղարաբաղու հայոց թագաւորաց ազնիւ զինվորած մնացեալ ժառանգք մելիքներըս, քոյ մեծ և բարի համբաւն լսեցիմք, որ բաղումք զորօք շնորհեալ ես երկիրն մեր գալն և ի դալըստեան քոյ շատ բարոք եմք կամենում և ապայ մինչև այժմուս ոչինչ դալըստեան քոյին ահվալ չիմացանք և մահմեդական ազգն ավելի թշնամացելայ մեր քրիստոնէից վերայ. ոչինչ տեղաց չունիմք օգնականութիւն, միայն ապաւինել եմք առաջ աստուած և յետոյ Ամենայպայծառ և Ամենիշխան ինք-

[14] «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», ч. II, М., 1838, стр. 69—70.

[15] М. Нерсисян, Из истории русско-армянских отношений, ч. I, Ереван, 1956, стр. 102—103.

[16] Նույն տեղում։

[17] Архив ЛОИИ, Собрание рукописных книг, д. 342, лл. 16, 23.

[18] ЦГВИА, ф. 52, оп. 194, д. 266, л. 9.

նակալ ողորմած. թագաւորոյն էլ գրով ողորմութիւն ենք խնդրած, որ մեր ազգին օգնութիւն հասնելուն մեզ բաւական զինվորք առաքի, և ի քոյ մեծառատ ողորմութիւնն մեր ազգիցս անպակաս արասցէս վասն մերոցս նեղութեան մետ առնելով մեր խնդրվածկն յետևելով կատարեալ մեզ օգնութիւն շնորհե»[19]։

Սուվորովի հետ նամակագրություն են ունեցել նաև մելիք Ջումշուդը, յուզբաշի Պետրոսը և ուրիշներ։ Այդ մասին է վկայում տարիներ հետո նրանց գրած նամակը Աստրախանի նահանգապետ Գուդովիչին, որտեղ, ի միջի այլոց, ասված է. «781 և 782 թվականներին պարոն գեներալ Սուվորովը և գեներալ Պոտյոմկինը բավական նամակագրություն ունեցան մեզ հետ»[20]։

Ռուս-թուրքական 1787—1791 թթ. պատերազմի շրջանում, երբ ռուսական բանակը հաղթական կռիվներ էր մղում Մոլդավիայում և Վալախիայում, Սուվորովը նորից հանդիպումներ ունեցավ Հովսեփ Արղությանի հետ, որը գործող բանակ էր եկել իշխան Գ. Պոտյոմկինի հրավերով։ Զորավարին այստեղ գործակցեց նաև «արարատյան դեսպան» Ստեփան Դավթյանը։ Նա վարում էր թարգմանչի պաշտոն և զբաղվում հայ գաղթականների հարցով։ Ալեքսանդր Վասիլևիչը 1792 թ. դիմում ուղարկեց բարձր հրամանատարությանը՝ Ստ. Դավթյանին հովանավորելու և նրան «օգնության ձեռք մեկնելու» խնդրանքով[21]։

Կանգ չառնելով Ա. Վ. Սուվորովի մյուս հայ բարեկամների ու ծանոթների վրա, հարկ ենք համարում, սակայն, վերջում նշել հետևյալ հանգամանքը. ռուս աշխարհահռչակ զորավարը մեծ հարգանք էր վայելում ժամանակի հայ հասարակական-քաղաքական գործիչների մեջ ոչ միայն որպես հանճարեղ զորահրամանատար, այլև որպես ռուսական պետության ակտիվ գործիչ, որ անկեղծորեն ձգտում էր աջակցել Հայաստանի ազատագրմանը պարսկական շահի և թուրքական սուլթանի ծանր լծից։ Այս տեսակետից բնորոշ է Հովսեփ Արղությանի 1795 թ. դեկտեմբերի 15-ի նամակն ուղարկված Թբիլիսիից Պետերբուրգ Ստեփան Դավթյանին։ Խոսելով այն լուրերի մասին, որոնց համաձայն պատրաստվում է ռուսական զորքերի նոր արշավանք դեպի Անդրկովկաս, պարսից զավթիչների դեմ, Արղությանը գրում էր. որ լավ կլիներ, եթե արշավանքը գլխավորի Սուվորովը. «Եթե ուղարկեն գրաֆ Սուվորովին, ապա գործը կվերջանա ի բարօրություն մեր... Իմ կողմից ողջունիր նրան և ասա... շտապիր օգնության տարաբախտ վրացական թագավորությանը և իր կողմից սիրված իմ հայրենիքին»[22]։

* * *

Արխիվային և մյուս նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ա. Վ. Սուվորովի անմիջական հրամանատարությամբ տեղի ունեցած պատերազմական բազմաթիվ գործողություններին ու փայլուն հաղթանակներին գործուն մասնակցություն են ունեցել նաև հայ սպաներ։ Ավելին։ Դրանցից մի քանիսը եղել են զորավարի հավատարիմ աշակերտները և մարտական զինակիցները։

---

19 Նույն տեղում, թ. 7։

20 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1977, № 1, էջ 242։

21 ЦГАДА, ф. 15, д. 235, лл. 12.

22 «Кавказская старина», Тифлис, 1872, № 2, стр. 30—31 (ընդգծումը մերն է—Մ. Ն.)։

Այս հարցի մասին պատմագիտական գրականության մեջ գոյություն ունի միայն մեկ սեղմ հիշատակություն։ Հայ ժողովրդի պատմության հարցերին նվիրված նյութերի ժողովածուում, որ լույս է տեսել մոտ 140 տարի առաջ Մոսկվայում (կազմող՝ Ս. Ն. Գլինկա, հրատարակություն Լազարյան ճեմարանի), տեղ են գտել հետևյալ տողերը. «Հռչակավոր զորահրամանատար գեներալիսիմուս իշխան Ալեքսանդր Վասիլևիչ Իտալիյսկու, կոմս Սուվորով-Ռիմնիկսկու հրամանատարությամբ մղված մարտերում և արշավանքներում հայերից մասնակցել են. փոխգնդապետ Խաստատովը, փոխգնդապետ Մանևևը և մայոր Լալաևը. այս երկուսը գեներալիսիմուսի վստահելի ու սիրելի անձերն էին։ Հետագայում Խաստատովը քաջությամբ և վաստակով արժանացավ գեներալ-մայորի աստիճանի և պատվանշանների, իսկ Մանևևը, ի ցավ զորահրամանատարի և բոլոր նրան ճանաչողների, սպանվեց Իզմայիլի գրավման ժամանակ։ Այս քաջարի Մանևևը անասելի անվեհերությամբ աչքի ընկավ գրոհի ժամանակ»[23]։

Միայն այսքանը։ Բայց ովքե՞ր են այդ զինվորականները, որտե՞ղ և ի՞նչ գործունեություն են ծավալել նրանք, արդյո՞ք նշված անուններով սահմանափակվում է հանձարեղ զորավարի հայ աշակերտների ու զինակիցների ցուցակը։ Աշխատենք պատասխանել այս հարցերին։

Ա. Վ. Սուվորովի զինակիցներից ու բարեկամներից մեկը, իրոք, եղել է ասարախանցի հայ՝ Բոգդան Խաստատովի եղբայր Ակիմ (Եկիմ) Վասիլևիչ Խաստատովը (1756—1809)։ Ծառայելով ռուսական բանակում (Վլադիմիրյան հեծյալ գնդում) նա արդեն 1770-ական թթ. կեսերին ուներ կապիտանի, իսկ հետագա տարիներին հասավ գեներալ-մայորի աստիճանի։ 1780 թ. Խաստատովը ուղարկվում է Սուվորովի տրամադրության տակ, և հետաքրքիր է, որ այդ արվում է մեծ զորավարի խնդրանքով։ 1780 թ. փետրվարի 27-ի նամակում՝ ուղղված իշխան Գրիգորի Պոտյոմկինի գրասենյակի պետ գեներալ Պ. Ի. Տուրչանինովին, Սուվորովը խնդրում է կապիտան Ակիմ Խաստատովին ուղարկել իր դիվիզիայում ծառայելու համար։ Խնդիրքը բավարարվում է։ Խաստատովը շուտով դառնում է զորավարի մտերիմներից մեկը։ Բնորոշ է. օրինակ, որ Խաստատովի և ոմն գնդապետ Պիեռի միջև տեղի ունեցած միջադեպի կապակցությամբ Սուվորովը 1781 թ. նոյեմբերի 19-ին հատուկ նամակ է ուղարկում գեներալ Տուրչանինովին, խնդրելով նրան՝ օգնել ու հովանավորել կապիտան Խաստատովին[24]։

Ակիմ Խաստատովը աչքի ընկավ հատկապես ռուս-թուրքական երկրորդ (1787—1791) պատերազմի տարիներին։ Սուվորովի այդ ժամանակաշրջանի նամակներում և պաշտոնական թղթերում հաճախ է հիշվում Խաստատովի անունը։ Այսպես, Գ. Պոտյոմկինին ուղարկված 1787 թ. հոկտեմբերի 1-ի իր զեկուցագրում խոսելով Կինբուռնի մոտ տեղի ունեցած ճակատամարտի մասին և ընդգծելով ռուս զինվորների ու սպաների ցուցաբերած սխրագործությունները, զորավարը գրում էր, որ ռուսական զենքի հաղթանակին խոշոր

---

23 «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа», ч. III, М., 1838, стр. 302. *Նկատենք, որ ժողովածուում բերված այս տեղեկությունների կապակցությամբ ցույց չի տրված որևէ աղբյուր։*

24 Архив ЛОИИ. Собрание рукописных книг, д. 342, стр. 40.

չափով նպաստեց նաև իր շտաբի գեներալ-ադյուտանտ քաջարի Ակիմ Խաստատովը[25]։

1789 թ. Հուլիսին Սուվորովը, նկարագրելով ռուսական զորքերի փայլուն հաղթանակը Ֆոկշանում, ռազմական սխրագործություն կատարած սպաների ցուցակում հիշատակում է նաև Ակիմ Վասիլևիչ Խաստատովին։ Կինբուռնի մոտ (1787 թ.) աչքի ընկնելու համար Խաստատովը ստացել էր փոխգնդապետի աստիճան, իսկ Ֆոկշանում կատարած քաջության համար պարգևատրվել էր Ս. Գևորգի չորրորդ աստիճանի շքանշանով[26]։ Փոխգնդապետ Խաստատովը, նշում էր Սուվորովը, մարտնչել է «Ֆոկշանի մոտ և վանքի գրոհի ժամանակ, որտեղ և վիրավորվել է. Ռիմնիկի մոտ աջ թևի ծայրային գրենադերական կարեի հրամանատարն էր և առաջինն էր, որ 5000 թուրքերի կողմից ճնշման ենթարկվեց, բայց կես ժամ հետո նրանց փախուստի մատնեց»[27]։ Գ. Ա. Պոտյոմկինին հաղորդելով Ռիմնիկ գետի մոտ տեղի ունեցած մարտերի մասին, Ա. Վ. Սուվորովը 1789 թ. սեպտեմբերի 11-ին գրում էր. «...փոխգնդապետներ Ակիմ Խաստատովը։ Լեվ Դառոզը ամեն կողմի գործողություններին հասնելով, հատկապես ցուցաբերեցին հոգու կայունություն և քաջություն»[28]։ Այդ նույն փաստաթղթում խոսվում էր փոխգնդապետ Խաստատովի հրամանատարությամբ գործող 2-րդ և 3-րդ գրենադերական գումարտակների փայլուն հաղթանակների մասին[29]։

Ա. Խաստատովը Իզմայիլի համար մղվող մարտերի ակտիվ մասնակիցներից էր։ 1790 թ. դեկտեմբերի 21-ին Գ. Պոտյոմկինին ուղղված զեկուցագրում Սուվորովը, խոսելով Իզմայիլ բերդի գրավման մասին, նշում էր. «Պետք է ըստ արժանվույն գնահատել ինձ մոտ գտնվող աստիճանավորներին, որոնք կատարեցին իմ բոլոր հրամանները։ Հատուկ ուշադրության արժանի են փոխգնդապետներ Ստարոդուբյան Կարաբիներյան Ակիմ Խաստատովը, Նովգորոդյան հետևակային Վլադիմիր Գորչակովը, Մալոռոսիյան հեծյալ-գրենադերական Ատեպան Շիրյայը, որոնց ուղարկել եմ ամենավտանգավոր տեղերի զորասյուներ։ Հաղթահարելով բոլոր դժվարությունները ուժեղ կրակոցների տակ, նրանք իմ հրամանները տեղ են հասցրել ճշտությամբ»[30]։

Այս բոլորից հետո պատահական չէ, իհարկե, որ Ա. Վ. Սուվորովի կյանքի և գործունեության հայտնի մասնագետ Վ. Ալեքսեևը գրել է. «Ակիմ Խաստատովը եղել է Սուվորովի մարտական ընկերը»[31]։

Խաստատովը, որ գիտեր մի շարք լեզուներ. 1793 թ. պաշտոնավարել է Կ. Պոլսի ռուսական դեսպանատանը, ապա նորից ընդունվել է զինվորական ծառայության։ 1799 թ. սկզբին, ունենալով գեներալ-մայորի աստիճան, անցել է հանգստի[32]։

Ի դեպ, ավելորդ չէ նկատել, որ Ա. Վ. Սուվորովի աշակերտ և մարտական զինակից, ռուսական բանակի սպա Խաստատովը նույն գեներալ-մայոր

---

25 ЦГВИА, ВУА, д. 2415, ч. 3, л. 15.
26 «Военный сборник», 1910, № 5, стр. 274.
27 А. В. Суворов, Документы, т. II, М., 1957, стр. 498.
28 Նույն տեղում, էջ 481։
29 ЦГВИА, ф. 52, оп. 203, д. 14, л. 90.
30 ЦГВИА, ВУА, д. 2413, л. 39.
31 «Письма и бумаги А. В. Суворова», т. I, стр. 364.
32 Ա. Վ. Խաստատովը թաղված է Պետերբուրգի հայկական գերեզմանոցում։

Ա. Վ. Խաստատովն էր, որի ընտանիքի մտերիմ բարեկամը դարձավ Մ. Յու. Լերմոնտովը[33]։ Ակիմ Խաստատովը ամուսնացած էր Լերմոնտովի տատ Ելիզավետա Արսենևնայի քրոջ՝ Եկատերինա Արսենևնայի հետ։ Խաստատովի ընտանիքի անդամները՝ կինը (Եկատերինան), տղան (Ակիմը), աղջիկները (Մարիան և Աննան), փեսաները (Պ. Վ. Շանգիրեյը, Ռ. Ի. Պետրովը) և ուրիշներ սիրով են ընդունել երիտասարդ բանաստեղծին։ Լերմոնտովը հաճախ է հյուրընկալվել Խաստատովների՝ Թերեքի ձախ ափին գտնվող կալվածքում, ապա նրանց՝ Պյատիգորսկի բնակարանում։

Ա. Վ. Սուվորովի գնահատված ու սիրված զինվորականներից էր նաև Լալաևը։ Մարտին Ստեպանովիչ Լալաևը (ծնվել է 1764 թ.), ռուս-թուրքական երկրորդ պատերազմի ակտիվ մասնակիցներից էր, 1789—1790 թթ. ուներ կապիտանի, այնուհետև՝ սեկունդ-մայորի աստիճան։ Ռիմնիկ գետի մոտ տեղի ունեցած մարտում աչքի ընկած սպաների թվում զորահրամանատարը հիշատակում է նաև Լալաևին։ 1789 թ. սեպտեմբերի 11-ի իր ռազմազեկույցում Սուվորովը, խոսելով մի քանի քաջարի սպաների մասին և նշելով այն, որ նրանք մեծ անվեհերությամբ կատարել են իր հանձնարարությունները «անընդհատ գտնվելով դաժան կրակի տակ», ավելացնում էր. «Այս նույն ձևով ինձ օգտակար են եղել Ֆանագորյան գրենադերական կապիտան Մարտին Լալաևը, իմ շտաբի օբեր-աուդիտոր Անդրեյ Սոմովը» և ուրիշներ[34]։

Սուվորովը Լալաևի անունը մտցրել է այն սպաների ցուցակում, որոնց նա ներկայացրել է պարգևատրման Ֆոկշանում և Ռիմնիկում ցուցաբերած քաջության և արիության համար։ Մի քանի սպաների, այդ թվում և Լալաևի մասին Ալեքսանդր Վասիլևիչը գրել է. «Երկու դեպքում էլ աչքի են ընկել ճարպկությամբ, հրամանները և կարգադրությունները հասցնելով երկու կորպուսներին, քաջությամբ և արիությամբ՝ ամենաուժանգավոր վայրերում և ոգու արիությամբ ու անխոնջ աշխատասիրությամբ՝ տարբեր պարագաներում»[35]։

Մ. Լալաևը աչքի ընկավ նաև Իզմայիլ բերդի համար 1790 թ. դեկտեմբերին մղված մարտերի ժամանակ։ Սուվորովը, նկարագրելով բերդի գրոհը, նկատում էր, որ սեկունդ-մայոր Մարտին Լալաևը և մի քանի այլ սպաներ «թշնամուն պարտության էին մատնում գերազանց քաջությամբ և խիզախությամբ»[36]։

Հարկ է ավելացնել, որ մեզ են հասել Սուվորովի սեփական ձեռքով գրված երեք գրությունները հասցեագրված Մ. Ս. Լալաևին, որոնցում շարադրված են զանազան հանձնարարություններ։ Գրությունները գրված են ռուս-թուրքական երկրորդ պատերազմի ժամանակ։ Դրանցից մեկում (1789 թ. նոյեմբերի 11-ի թվակիր) կոմս Ալեքսանդր Սուվորով-Ռիմնիկսկին, որ այդ ժամանակ գտնվում էր Բեռլադում, կարգադրում է. «Մարտին Ստեպանովիչին՝ նեղություն քաշել գնալու Յաս. ս. Անդրեյի ադամանդակուռ իմ խաչով և այն կանոնավոր նորոգել։ Եվ եթե հարկ լինի, խոնարհաբար խնդրել նորին գերազնվություն Սերգեյ Լազարովիչի օգնությունը»։ Երկրորդ գրության մեջ

33 М. Ю. Лермонтов, Сочинения в шести томах, М.—Л., 1953—1957.
34 ЦГВИА, ф. 52, оп. 203, д. 14, л. 94.
35 ЦГВИА, ВУА, д. 2414, л. 17.
36 А. В. Суворов, Документы, т. II, стр. 557.

(1790 թ.) Սուվորովը առաջարկում է Լալաևին պարզել, թե ինչո՞ւ ավստրիական կորպուսի հրամանատար այրքայազն Կոբուրգսկին իր շքախումբը Բենդերի քաղաքից ուղարկել է Կապուվար քաղաքը։ Երրորդ գրության մեջ (գրված նույնպես 1790 թ.) Սուվորովը պատվիրում է Լալաևին հյուրընկալել թուրքական վեզիրին, որին զորահրամանատարը սպասում էր խաղաղ բանակցությունների համար։ Այստեղ Լալաևին մասնավորապես առաջարկվում էր՝ վեզիրին ընդունել «բարեհամբույր կերպով և սրտաբաց։ Պարկեշտ ձևով հետաքրքրվել խաղաղության, պատերազմի և նորությունների մասին։ Հյուրասիրել սուրճ, ծխախոտ և եթե կամենա փլավ, բյաբաբ և այլն (ինչպես և խմիչքով)»[37]։

Այս գրությունների հրատարակիչ Ա. Վ. Բերնացկին համապատասխան ծանոթագրություններում նշում է, որ ռուս-թուրքական երկրորդ պատերազմի ժամանակ «Սուվորովի անմիջական տրամադրության տակ էր գտնվում նրա (Սուվորովի—Մ. Ն.) լիիրավ վստահությունը վայելող Մարտին Ստեպանովիչ Լալաևը՝ հետագայում Օրդենյան կիրասիրական գնդի գնդապետը»։ Միաժամանակ Բերնացկին Լալաևին համարում է «Սուվորովի զինակիցը»[38]։

Ա. Վ. Սուվորովի մերձավոր զինվորականներից էր նաև Մանեևը։ Իվան Մանեևը (1763—1790) նույնպես գործուն մասնակցություն է ունեցել ռուս-թուրքական երկրորդ պատերազմի մարտական գործողություններին։ 1787 թ. նա վարում էր Սուվորովի շտաբի օբեր-աուդիտորի, իսկ հետագայում՝ Սմոլենսկյան դրագունյան գնդի սեկունդ-մայորի պաշտոնը։ 1787 թ. հոկտեմբերին վիրավորվել է Կինբուռնի և 1788 թ. հուլիսին Օչակովի տակ տեղի ունեցած ճակատամարտերում։

1787 թ. հոկտեմբերի 8-ին Գ. Պոտյոմկինին ուղարկված զեկուցագրում Սուվորովը Կինբուռնի տակ տեղի ունեցած ճակատամարտի կապակցությամբ պարգևատրման է ներկայացրել ռոտմիստր Շուխանովին և «գործի ողջ ընթացքում ինձնից անբաժան գտնվող ու հրամաններս տեղ հասցնող իմ շտաբի օբեր-աուդիտոր Իվան Մանեևին»[39]։ Մեկ օր անց Ալեքսանդր Վասիլևիչը գրում է, որ թուրքերը Կինբուռնում օգտագործում էին այնպիսի գնդակներ, որոնք ծանր վերքեր էին առաջացնում, և որ «իմ օբեր-աուդիտոր Մանեևի վզից հանվել է այդպիսի մի գնդակ»[40]։

Մանեևը հիշատակվում է նաև 1788 թ. օգոստոսի 6-ին Եկատերինա II-ի անունով իշխան Պոտյոմկինի գրած ռապմագեկույցում։ Այստեղ ի թիվս այն սպանների, ովքեր վիրավորվել են Օչակովի տակ, նշվում է նաև «սեկունդ-մայոր Մանեևը»[41]։

Մանեևը սպանվեց Իզմայիլի գրոհի ժամանակ, 1790 թ. դեկտեմբերին։

Սուվորովի հայ աշակերտներ ու զինակիցներ Խաստատովի, Լալաևի և Մանեևի շարքին կարելի է դասել նաև կապիտան Յակով Աբրամովին (Հակոբ Աբրահամյանին)։ Աբրամովը Հովսեփ Արղությանին ուղղած իր երեք նամակներում, գրված Ղալարում 1798—1799 թթ., պատմում է զորահրամա-

---

37 «Русская старина», 1913, кн. 5, стр. 315.

38 Նույն տեղում, էջ 316 (ընդգծումները մերն են—Մ. Ն.)։

39 ЦГВИА, ф. ВУА, д. 2415, ч. I, л. 72.

40 «Генералиссимус Суворов», М., 1947, стр. 156.

41 ЦГВИА, ф. 52, оп. 194, д. 203, л. 157.

նատարի անմիջական հրամանատարության տակ ունեցած իր զինվորական ծառայության մասին։ Նամակներից երևում է, որ 1794 թ. Աբրամովն ուներ ռոտմիստրի, իսկ հետո՝ կապիտանի աստիճան։ Լեհական կամպանիայի ժամանակ գտնվել է Սուվորովի շտաբում, վիրավորվել է մի քանի անգամ և այլն։

Աբրամովը Սուվորովի մասին խոսում է մեծ սիրով ու հարգանքով։ Նամակների հեղինակը գրում է, թե Ալեքսանդր Վասիլևիչը իրեն միշտ հովանավորել է։ 1798 թ. մարտի 6-ի նամակում Աբրամովը նշել է, որ Ա. Վ. Սուվորովը «այնպիսի բարերար էր ինձ համար, ինչպիսին չի եղել իմ հայրը»[42]։

Մի այլ նամակում Աբրամովը Սուվորովի մասին գրել է. «Ես նրան ծառայել եմ օրինավոր կերպով։ Գնացել եմ այնտեղ, ուր նա հրամայում էր։ Չեմ մտածել ոչ քնելու, ոչ հացի... մասին, գնում էի ու կատարում նրա հանձնարարությունները և վերադառնում էի նրա մոտ, և նա բազմիցս շատ նշանավոր մարդկանց ներկայությամբ համբուրել է ճակատս»[43]։

1798 թ. Սուվորովը Հովսեփ Արղությանի հետ ունեցած իր հանդիպումներից մեկի ժամանակ հիշել է Աբրամովին և հետաքրքրվել նրա վիճակով։ Իմանալով այդ մասին Աբրամովը Արղությանին գրած իր նամակում խորին երախտագիտություն է հայտնել Ա. Վ. Սուվորովին։

Հնարավոր է, որ Աբրամովը թույլ է տալիս որոշ չափազանցում և անճշտություններ։ Սակայն ակնհայտ է, որ Յակով Աբրամովը այն հայ սպաներից մեկն էր, որոնք ծառայել են մեծ զորավարի անմիջական ղեկավարության տակ և մոտ հարաբերությունների մեջ են եղել նրա հետ։

Կարծում ենք, որ Ա. Վ. Սուվորովի մոտ ծառայած հայ սպաների շրջանակը չի սահմանափակվում հիշատակված անուններով։ Բանն այն է, որ XVIII դարի երկրորդ կեսի ռուս-թուրքական պատերազմներում, որոնցում մեծ դեր է խաղացել անվանի զորահրամանատարը, մասնակցել են շատ հայեր։ Դրանց թվում են եղել, օրինակ, Կասպարովը, Սումբատովը, Լազարևները, Խոջամալոյը, Ուլուխանովը, Մկրտիչևը, Այվազովը, Արղությանը, Վահանովը և ուրիշներ։ Ռուսական բանակում էին գտնվում նաև հայ կամավորներ։ Հաստատական է, որ արխիվային հետագա պրպտումները կնայտաբերեն տվյալներ այն մասին, որ Ա. Վ. Սուվորովի անմիջական հրամանատարության տակ մարտնչել են նաև այլ հայ զինվորականներ։

АРМЯНСКИЕ ДРУЗЬЯ И СПОДВИЖНИКИ А. В. СУВОРОВА

(К 250-летию со дня рождения великого полководца)

Академик АН Армянской ССР М. Г. НЕРСИСЯН

(Резюме)

В 1770—1780-х годах А. В. Суворову довелось вступать в контакты с армянскими общинами Крыма, Астрахани и Москвы, принимать активное участие в русско-армянских переговорах, переписываться со многими

---

42 Մաշտոցի անվան Մատենադարան, արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, թղթ. 8, փ. 33։ Տե՛ս նաև ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.). 1950, № 8, էջ 98—101։

43 Նույն տեղում։

армянскими политическими и церковными деятелями. В результате этого он установил деловые дружеские отношения с Иосифом Аргутинским (Аргутяном), Иваном Лазаревым (Лазаряном), «араратским послом» Степаном Давтяном, архимандритом Петросом Маркосяном, Александром Меликовым, Маркосом Серебряковым (Арцатагорцяном), с некоторыми армянскими карабахскими меликами и другими видными и влиятельными лицами. Следует отметить, что под непосредственным командованием великого русского полководца сражались также офицеры-армяне, храбрость и самоотверженность которых неоднократно отмечал сам Александр Васильевич. Более того, некоторые из этих офицеров (А. Хастатов, Ст. Лалаев, Ив. Манеев) принадлежали к числу учеников и боевых сподвижников прославленного полководца.